

УЧЕННЫЕ АРМЕНИИ ✦ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԻՏԱԿԱՎԱՆՆԵՐ


ՀՀ ՓԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА



Գալուստ
Անուշավանի
ԳԱԼՈՅԱՆ



Галуст
Анушаванович
ГАЛОЯН





**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ФУНДАМЕНТАЛЬНАЯ НАУЧНАЯ БИБЛИОТЕКА**

**МАТЕРИАЛЫ К БИОБИБЛИОГРАФИИ
УЧЕНЫХ АРМЕНИИ**

№ 60

**ГАЛУСТ АНУШАВАНОВИЧ
ГАЛОЯН**

Вступительная статья Г. СИМОНЯНА,
В. МИКАЕЛЯНА

Библиография составлена М.В. САРКИСЯН

ИЗДАТЕЛЬСТВО "ГИТУТЮН" НАН РА
ЕРЕВАН 2005

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ**

**ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ
ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ**

№ 60

**ԳԱԼՈՒՍ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ
ԳԱԼՈՅԱՆ**

**Ներածականը՝ Հ. ՄԻՄՈՆՅԱՆԻ,
Վ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ**

Մատենագիտությունը կազմել է Մ.Վ. ՍԱՐԳՍՅԱՆԸ

Տպագրվում է Հայաստանի Հանրապետության ԳԱԱ
Խումանիտար գիտությունների բաժանմունքի բյուրոյի
երաշխավորությամբ և Հայաստանի ԳԱԱ
հիմնարար գիտական գրադարանի գիտական
խորհրդի որոշմամբ

Խմբագրական կոլեգիա
Հ.Ռ. Սիմոնյան (նախագահ), Հ.Բ. Ներսիսյան,
Ռ.Տ. Ջրբաշյան, Ս.Ն. Սարինյան, Հ.Ա. Թերզյան

Печатается по рекомендации бюро
Отделения философии и филологии НАН
Республики Армения

Редакционная коллегия
Г.Р.Симонян (председатель), А.Б. Нерсисян,
Р.Т. Джрбашян, С.Н.Саринян, А.А. Терзян

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ԳԱԼՈՒՄՏ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԳԱԼՈՅԱՆԻ
ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՏԱՐԵԹՎԵՐԸ**

Գալուստ Անուշավանի Գալոյանը ծնվել է 1927 թ. մարտի 1-ին Արթիկի շրջանի Փոքր Պարնի գյուղում /այժմ՝ Արագածոտնի մարզի Անուշավան գյուղ/:

1945 թ. ավարտել է Արթիկի շրջանի Փանիկ գյուղի միջնակարգ դպրոցը և ընդունվել ԵՊՀ:

1948-1950 թթ. Երևանի պետհամալսարանի ԼԿԵՄ կոմիտեի առաջին քարտուղար:

1950 թ. ավարտել է Երևանի պետհամալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը:

1950-1952 թթ. ՀԼԿԵՄ ԿԿ քարտուղար՝ ագիտացիայի և պրոպագանդայի գծով:

1952-1955 թթ. ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր հասարակական գիտությունների ակադեմիայի ասպիրանտ:

1955 թ. շնորհվել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1955-1958 թթ. ՍՄԿԿ ԿԿ առընթեր ՄԼԻ հայկական մասնաճյուղի ավագ գիտաշխատող:

1958-1963 թթ. ՍՄԿԿ ԿԿ առընթեր ՄԼԻ հայկական մասնաճյուղի դիրեկտորի գիտ. գծով տեղակալ և կուսակցության պատմության սեկտորի վարիչ:

1963 թ. շնորհվել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

1963-1979 թթ. ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի տնօրեն:

1964 թ. շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում:

1964-1967 թթ. ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի՝ գիտու-

թյան և տեխնիկայի գծով Լենինյան մրցանակ շնորհող կոմիտեի անդամ:

1971 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ:

1970 թ. ՀԽՍՀ Սինիստրների խորհրդին կից՝ գիտության և տեխնիկայի գծով Պետական մրցանակներ շնորհող հանձնաժողովի նախագահի տեղակալ:

1979-1982 թթ. ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար, նախագահության անդամ:

«ՍՄՀՄ-2եխսուլովակիա» պատմաբանների հանձնաժողովի անդամ:

1982 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս:

1982-1986 թթ. ՀԽՍՀ ԳԱ բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար:

1982-1989 թթ. Հայաստանի խաղաղության պաշտպանության հանրապետական կոմիտեի նախագահ, խաղաղության պաշտպանության խորհրդային կոմիտեի նախագահության անդամ:

1985 թ. – ՀԽՍՀ Պետական մրցանակի դափնեկիր:

1986 թ. պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

1986-1988 թթ. – ՀԽՍՀ ԳԱ փոխարեզիդենտ:

1988 թ. շնորհվել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

1988-1990 թթ. – ՀԿԿ Կենտկոմի քարտուղար:

1991-1994 թթ. – ՀՀ ԳԱ փոխարեզիդենտ:

1994 թ. նշանակվել է ՀՀ ԳԱԱ նախագահի խորհրդական:

1994-2003 թթ. ՀՀ ԳԱԱ նախագահության ընտրովի անդամ:

1998 – 2003 թթ. ՀՀ ԳԱԱ նախագահությանն առընթեր խմբագրական-հրատարակչական խորհրդի (ԽՀԽ) նախագահ:

2003 թ. վախճանվել է Երևանում:

**ОСНОВНЫЕ ДАТЫ ЖИЗНИ И
ДЕЯТЕЛЬНОСТИ АКАДЕМИКА
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ГАЛУСТА АНУШАВАНОВИЧА ГАЛОЯНА**

Галуст Анушаванович Галоян родился 1 марта 1927 г. в селе Покр Парни (ныне область Арагацотн, с. Анушаван).

1945 г. — Окончил среднюю школу с. Паник Артикского района и поступил в ЕГУ.

1948-1950 гг. — Первый секретарь комитета ЛКСМ Ереванского гос. университета.

1950 г. — Окончил факультет международных отношений Ереванского гос. университета.

1950-1952 гг. — Секретарь ЦК ЛКСМ Армении по агитации и пропаганде.

1952-1955 гг. — Аспирант Академии общественных наук при ЦК КПСС.

1955 г. — Присуждена ученая степень кандидата исторических наук.

1955-1958 гг. — Старший науч. сотрудник Армянского филиала Ин-та марксизма-ленинизма при ЦК КПСС.

1958-1963 гг. — Заместитель директора по научной части и зав. сектором истории партии Армянского филиала Ин-та марксизма-ленинизма.

1963 г. — Присуждена ученая степень доктора исторических наук.

1963-1979 гг. — Директор Института истории АН АрмССР.

1964 г. — Присвоено ученое звание профессора.

1964-1967 гг. — Член Комитета по Ленинским премиям в области науки и техники при Совете Министров СССР.

1971 г. — Избран членом-корреспондентом АН АрмССР.

1970 г. — Заместитель председателя Комиссии по Государственным премиям в области науки и техники при Совете Министров Армянской ССР.

1979-1986 гг. — Академик-секретарь АН АрмССР.

1982 г. — Избран академиком АН АрмССР.

1982-1986 гг. — Академик-секретарь АН АрмССР.

1982-1989 гг. — Председатель Армянского республиканского комитета защиты мира, член Президиума Советского комитета защиты мира.

1985 г. — Лауреат Гос. премии АрмССР.

1986 г. — Награжден орденом Трудового Красного Знамени.

1986-1988 гг. и 1991-1994 гг. — Вице-президент НАН РА.

1988 г. — Присвоено почетное звание заслуженного деятеля науки Армянской ССР.

1990 г. — Секретарь ЦК КП Армении.

1994 г. — Назначен советником Президента НАН РА.

1994-2003 гг. — Избранный член Президиума НАН РА.

2003 г. — Скончался в Ереване.

ԿՅԱՆՔԻ, ԳԻՏԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Գալուստ Անուշավանի Գալոյանը ծնվել է 1927 թ. Արթիկի շրջանի Փոքր Պարնի գյուղում: Պատանին գերազանց էր սովորում դպրոցում՝ աչքի ընկնելով նաև օրինակելի վարքուբարքով: Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերին Գալուստի հայրը՝ բժիշկ Անուշավանը, կամավոր մեկնել էր բանակ և ռազմաճակատում աչքի ընկել խիզախությամբ, բուժել ու մարտական շարքեր վերադարձրել հարյուրավոր վիրավորների: Նրա անձնուրացության մասին լեգենդներ էին հյուսվել Լեհաստանում և այլուր: Թշնամու դեմ տարբեր ռազմաճակատներում կռվում էին նաև Անուշավանի երկու որդիները՝ Միքայելը և Ալեքսանդրը: Տանը մոր խնամքին էին մնացել անչափահասները՝ Գալուստն ու Արմենը: Հայ կնոջ անզուգական կերպար էր Աննաման մայրիկը՝ հպարտ իր ընտանիքով, աչքը միշտ փոստատարի գալուն, հայացքը հառած ամուսնու և որդիների ճամփին:

Պատերազմի ավարտից հետո հաղթանակած որդիները վերադարձան տուն: Բայց չկար տան սյունը: Նա կյանքը նվիրել էր հայրենիքին... Եվ հայրենիքը չմոռացավ իր զավակին. Խորհրդային Հայաստանի կառավարության որոշումով Գալոյանների հայրական ոստանը՝ Պարնի գյուղը, վերանվանվեց Անուշավան Գալոյանի անունով:

1945 թ. ավարտելով միջնակարգ դպրոցը՝ ուսումնառությունը արդեն ընդունվում է Երևանի պետական համալսարանի նորաբաց միջազգային հարաբերությունների ֆակուլտետ:

Դժվարին, բայց կյանքով լի տարիներ էին: Վիրավոր, բայց հաղթանակած խրոխտ ժողովուրդը ամենի ուժով և մշտավառ հավատով ձեռնամուխ էր եղել կերտելու բաղձալի ապագան: Ոգևորությունն անսահման էր ամենուր, նաև՝ կրթության ասպարեզում:

Արտակարգ աշխատասեր ու խոհուն երիտասարդը հենց սկզբից աչքի ընկավ բարձր առաջադիմությամբ: Նրա սերնդի առջև բաց էին ունակությունները լավագույնս դրսևորելու հնարավորությունները:

Չետպատերազմյան տարիներին Երևանի պետական համալսարանը գիտական մտքի իսկական դարբնոց էր: Եվրոպական ցանկացած բարձրագույն ուսումնական հաստատության պատիվ կբերեր դասախոսական այն փայլուն կազմը, որ ուներ հայոց համալսարանը: Ֆակուլտետների և համալսարանի մակարդակով գիտական խրթին հարցերի քննարկումները դարձել էին առօրյա խնդիր: Գիտական կոնֆերանսներում Գալուստը հանդես էր գալիս հետաքրքիր զեկուցումներով ու կրքոտ ելույթներով, քննարկման ներկայացրած նրա ռեֆերատներում ցայտուն դրսևորվում էին հեղինակի բազմակողմանի գիտելիքները, ինքնուրույն դատողությունները, վիճահարույց հարցերում տեսակետները պաշտպանելու հետևողականությունը:

Գ. Գալոյանը նաև համալսարանի հասարակական-քաղաքական կյանքի ամենաակտիվ մասնակիցներից էր ու մեծ հեղինակություն էր վայելում ուսանողության շրջանում: Պատահական չէ, որ 1950 թ. նա ղեկավարում է համալսարանի կոմերիտական կազմակեր-

պությունը, ապա նրան ընտրում են ՀԼԿԵՄ Երևանի քաղաքային կոմիտեի քարտուղար:

Երկրի առաջընթացի հետ օր օրի հասունանում էր ավյունով լի երիտասարդը: Բոլորը համակված էին իրենց ուժերն ու գիտելիքները հայրենիքին անմնացորդ նվիրաբերելու ձգտումով, երկրի տնտեսությունը առաջ տանելու, ժողովրդի հոգևոր արժեքները բազմապատկելու մղումով: Հանրապետության խանդավառ երիտասարդությունը առաջին շարքերում էր: Գալուստը այդ երիտասարդության կազմակերպիչներից ու ղեկավարներից մեկն էր:

1950 թ. նա ընտրվում է ՀԼԿԵՄ Կիրովյան շրջկոմի առաջին քարտուղար, եռամսհուն աշխատանք ծավալում մտավորականության և ուսանողության շրջանում, ձեռք բերում լայն զանգվածների հետ աշխատելու փորձ ու հմտություն: Հաշվի առնելով երիտասարդության շրջանում վաստակած հեղինակությունը և կազմակերպչի ակնհայտ ծիրքը՝ Հայաստանի կոմերիտմիության կենտկոմի պլենումը Գ. Գալոյանին ընտրում է ՀԼԿԵՄ Կենտկոմի քարտուղար:

Թեև քաղաքական պատասխանատու աշխատանքը հետագա առաջխաղացման համար ընձեռել էր մեծ հնարավորություններ, բայց Գ. Գալոյանի գիտական հակումները գերակայեցին: 1952 թ. նա ընդունվում է ՍՍԿԿ Կենտկոմին առընթեր հասարակական գիտությունների ակադեմիա: Այս բարձրակարգ կրթական ու գիտական հաստատության դասախոսական կազմի մեջ էին ժամանակի սովետական հասարակագիտական մտքի խոշորագույն շատ ներկայացուցիչներ:

Գիտական ստեղծագործական մթնոլորտում Գալոյանը հարստացնում է իր գիտելիքները: 1955 թ. պաշտպանում է դիսերտացիա ու ստանում պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Սկսվում է նրա ուղին դեպի մեծ գիտություն:

Վերադառնալով Երևան՝ Գ. Գալոյանը աշխատանքի է անցնում Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղում՝ որպես ավագ գիտաշխատող, իսկ 1958-1963 թթ. վարում է բաժնի վարիչի ու դիրեկտորի գիտական գծով տեղակալի պաշտոնները: Միաժամանակ դասավանդում է Երևանի պետիանալսարանում, Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում և այլ բուհերում: Այս տարիներին նա կատարում է մի շարք լուրջ հետազոտություններ պատմակուսակցական գիտության բնագավառում: 1963 թ. Գ. Գալոյանը Մոսկվայում պաշտպանում է դոկտորական դիսերտացիա ու ստանում հայցած գիտական աստիճանը: Հաջորդ տարում նա արժանանում է պրոֆեսորի կոչման:

1963 թ. Գալոյանը նշանակվում է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի տնօրեն և այդ պաշտոնում աշխատում մինչև 1979 թ.: Նշված ժամանակաշրջանում նա լիովին բացահայտում է իր գիտական կարողությունները՝ հանդես գալով բազմաթիվ արժեքավոր հրապարակումներով, միաժամանակ ցայտուն դրսևորելով գիտական աշխատանքներ կազմակերպելու հիանալի ունակություններ: Այդ տարիներին ինստիտուտի կուլեկտիվում աշխատում էին հայ պատմագիտության երախտավորներ Աշոտ Հովհաննիսյանը, Սուրեն Երենյանը,

Մկրտիչ Ներսիսյանը, Ծատուր Աղայանը, Խիկար Բարսեղյանը, Արամայիս Մնացականյանը, Գևորգ Ղարիբջանյանը և ուրիշներ: Երիտասարդ տնօրենը պատկառանք ուներ ավագ գործընկերների հանդեպ, որոնք իրենց արժեքավոր աշխատություններով շարունակում էին հարստացնել հայ պատմագիտությունը: Տնօրենն աշխատանքին նվիրված էր ինքնամոռացությամբ, պահանջկոտ էր ամենից առաջ իր, ապա և աշխատակիցների նկատմամբ:

Ինստիտուտի խոշոր նվաճումն էր ստվարածավալ ութ հատորներից բաղկացած «Հայ ժողովրդի պատմություն» կոլեկտիվ աշխատությունը, որի ստեղծման բարդ ու դժվարին աշխատանքները գլխավորեց Գ. Գալոյանը: Բազմահատոր այդ աշխատության իրականացման համար նա ներդրեց իր բազմակողմանի գիտելիքները, գիտակազմակերպական տաղանդը: Աշխատությունը հանդիսացավ հայ պատմագիտական մտքի բարձրագույն դրսևորումը, խոշոր երևույթ հայագիտության մեջ, նաև՝ մեծարժեք ներդրում մեր ժողովրդի հոգևոր-մշակութային արժեքների գանձարանում:

Գիտական-ակադեմիական ծանրակշիռ այդ աշխատությունը, որն իր ընդգրկմամբ ու խորությամբ նախահեպը չուներ մեզանում, մեծ ընդունելություն գտավ գիտական շրջանակներում և ընթերցող լայն հասարակայնության կողմից, արժանացավ Հայկական ՍՍՀ պետական մրցանակի:

Գիտական ու գիտակազմակերպական եռանդուն գործունեություն ծավալած Գ. Գալոյանը 1971 թ.

ընտրվում է ԳԱ թղթակից անդամ, իսկ 1982 թ.՝ ակադեմիկոս:

Շուրջ 16 տարի պատմության ինստիտուտի տնօրենի պաշտոնում աշխատելուց հետո գիտնականը ակադեմիայի համակարգում վարում է ԳԱ ակադեմիկոս քարտուղարի (1979-1982), բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի (1982-1986), ԳԱ փոխպրեզիդենտի (1986-1988 և 1990-1994) պաշտոնները, 1994-ից մինչև կյանքի վերջը ՀՀ ԳԱԱ պրեզիդենտի խորհրդականն էր և գիտահրատարակչական խորհրդի նախագահը: 1979-2003 թթ. եղել է ԳԱԱ նախագահության անդամ:

Գ. Գալոյանը «մաքուր» գիտելիքների սահմանների մեջ ներփակված կաբինետային գիտնական չէր, այլ հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում ակտիվ դերակատարություն ունեցող գործիչ: Նա եղել է ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր Լենինյան և պետական մրցանակների կոմիտեի անդամ, ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր գիտության և տեխնիկայի բնագավառում պետական մրցանակների հանձնաժողովի անդամ ու այդ հանձնաժողովի նախագահի տեղակալ, խաղաղության պաշտպանության հայկական հանրապետական կոմիտեի նախագահ: Նա 1988-1990 թթ. եղել է ՀԿԿ Կենտկոմի գաղափարական աշխատանքների գծով քարտուղար: 1989 թ. ընտրվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր:

Գիտնականը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով; ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրերով, Վավիլովի անվան և մի շարք ուրիշ մեդալներով:

Հայաստանի և Անդրկովկասի նոր ու նորագույն շրջանների պատմության բնագավառում անվանի մասնագետ Գ. Գալոյանի գիտական ժառանգությունն ընդգրկում է Հայաստանում և երկրամասում կոմունիստական ու բանվորական շարժումների, Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման, հայ ժողովրդի պատմական ճակատագրում Ռուսաստանի խաղացած դերի, Յկոտեմբերյան հեղափոխությունից հետո Արևելյան Հայաստանում ծավալված բախտորոշ իրադարձությունների ու դրանց նկատմամբ արևմտյան մեծ տերությունների դրսևորած վերաբերմունքի, հայ ժողովրդի պատմության բուրժուական խեղաթյուրումների դեմ պայքարի բազմաբնույթ հիմնախնդիրները:

«Բանվորական շարժումը և ազգային հարցը Անդրկովկասում 1900-1922 թթ.» մենագրության մեջ (1960) և ուրիշ հրապարակումներում Գ. Գալոյանը ցույց է տվել Հայաստանում կոմունիստական ու բանվորական շարժումների զարգացման օրինաչափությունները, բուլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը աշխատավորական զանգվածներին ցարիզմի և բուրժուազիայի դեմ պայքարի հանելու ուղղությամբ: Նա մեզանում առաջինն էր, որ հաղթահարելով առանձին պատմաբանների ու քաղաքական գործիչների դիմադրությունը, ճշմարտացի ներկայացրեց 1918 թ. փետրվարին ստեղծված Հայաստանի (Արևմտահայաստանի) կոմունիստական կուսակցության և նրա ղեկավարության (Գուրգեն Հայկունի և այլք) խաղացած դերը 1918-1920 թթ. հայ իրականության մեջ կոմունիստական շարժման զարգացման գործում, ցույց տվեց արևմտա-

հայ քաղաքական այդ կազմակերպության՝ 1920 թ. ստեղծված Հայաստանի կոմունիստական կուսակցության հետ միավորվելու ընթացքը:

1957 թ. Մոսկվայում ռուսերեն լույս տեսավ Գալոյանի «Պայքար Հայաստանում խորհրդային իշխանության համար» գիրքը, որին հետևեցին «Մայիսյան հերոսական ապստամբությունը» և այլ աշխատություններ: Աղբյուրագիտական հարուստ նյութերով հագեցած այդ գործերում հեղինակը ցույց է տվել, որ ցեղասպանության սարսափներից ազատված արևմտահայ բեկորների և երիտթուրքերի ու քեմալականների կողմից ֆիզիկական ոչնչացման վտանգի ենթարկված արևելահայության փրկությունը Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումն էր: Խորհրդային կարգերի շնորհիվ հայ ժողովուրդը պատմական ամենակարճ ժամանակամիջոցում Հայաստանը դարձրեց բարձր զարգացած տնտեսության, առաջավոր կրթության ու մշակույթի երկիր:

Գ. Գալոյանը հայ-ռուսական բարեկամության հետևողական ջատագովներից էր: «Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները» (ռուսերեն, Մոսկվա, 1976), «Պատմության քառուղիներում» (1982) և այլ աշխատություններում նա ցույց է տվել, որ դարերի տառապանքի ճանապարհ անցած հայ ժողովրդի համար ռուսական կողմնորոշումը եղել է նրա իսկ պատմության թելադրանքը: Մահմեդական տիրակալների լծից հայ ժողովրդի ազատագրումը պայմանավորված է եղել ոչ թե նրա նկատմամբ ռուսական արքունիքի պլատոնական սիրով, այլ նրանով, որ պատմության քառուղիներ-

րում երկու ժողովուրդների շահերը բազմիցս համընկել են, ու նրանք զգացել են մեկը մյուսի կարիքը:

Գիտնականը շատ տարիներ է նվիրել Հայաստանի Առաջին հանրապետության ստեղծումից մինչև Լոզանի կոնֆերանսն ընկած ժամանակահատվածում հայկական դատի հանդեպ արևմտյան տերությունների կառավարությունների վարած քաղաքականության լուսաբանմանը: Այդ տեսակետից առանձնապես արժեքավոր է «Հայաստանը և մեծ տերությունները. 1917-1923 թթ.» մենագրությունը: Հեղինակը, տիրապետելով անգլերենին, ամիսներ շարունակ աշխատել է բրիտանական արխիվներում, հայտնաբերել ու առաջին անգամ սույն մենագրության միջոցով գիտական շրջանառության մեջ դրել մինչ այդ բոլորովին անհայտ բազում վավերագրեր և դիվանագիտական փաստաթղթեր: Աշխատության մեջ և ուրիշ հրապարակումներում հարցի խորագին քննության արդյունքում արված եզրահանգումը որոշակի է՝ հայերի խնդիրներով զբաղվելիս մեծ տերությունները բացառապես հետապնդել են իրենց շահերը՝ դիվանագիտական խաղերում հայ ժողովրդի արդարացի դատը օգտագործելով որպես մանրադրամ:

Գալուստ Գալոյանը «Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում XVI դարից 1917 թ.» գրքում հին և միջնադարյան հայոց պատմությանը նվիրված բաժիններ է հատկացրել, որոնց անհրաժեշտությունը պայմանավորված է հետազոտվող հարցերի խորության բացահայտմամբ:

Հայ ժողովրդի ծագումնաբանության հարցը մի

կողմից, Հայ Դատը, հայոց պետականության և եկեղեցու պատմությունը, Հայկական հարցը մյուս կողմից՝ գտնվելով ժամանակագրական տարբեր աստիճանների վրա, Գալոյանի պատմագիտական ընկալմամբ դրվել են պատմափիլիսոփայական և կուռ տրամաբանական համակարգի մեջ:

Ակադեմիկոս Գալոյանը առաջադրված խնդիրների բազմակողմանի մեկնաբանման համար անհրաժեշտ է համարել ուսումնասիրել 16-րդ դարից ի վեր եվրոպական տերությունների արևելյան քաղաքականությունը, նրանց միջպետական հարաբերությունները, Առաջավոր Ասիայում իրենց դիրքերն ամրապնդելուն վերաբերող պատմությունը:

Ուսումնասիրելով Օսմանյան կայսրությունում և Սեֆյան Պարսկաստանում հայերի սոցիալական, իրավական ու քաղաքական վիճակի, ինչպես նաև եվրոպական տերությունների հետ այդ երկու բռնակալական պետությունների ունեցած փոխհարաբերությունների հիմնախնդիրները՝ Գ. Գալոյանը ի հայտ է բերել ինչպես դրանց որոշակի բացասական ազդեցությունը հայ ժողովրդի ազատագրական պայքարի վրա, այնպես էլ եվրոպական տերությունների դիրքորոշումը Հայաստանի նկատմամբ՝ իրենց զավթողական ծրագրերի իրագործման խնդրում: Այդ փաստարկված հայեցակարգային մոտեցումը Գալոյանին թույլ է տալիս համոզիչ կերպով պատասխանել այն հարցին, թե ինչը նպաստեց Օսմանյան Թուրքիային՝ նախապատրաստելու ծրագրված և երիտթուրքերի միջոցով իրագործված հայերի ցեղասպանությունը:

Գ. Գալոյանը բազմիցս հանդես է եկել հայ ժողովրդի պատմության խեղաթուրման փորձերի դեմ, խոր համոզվածությամբ ու կրքոտ հետևողականությամբ հակահարված տվել կեղծարարների քարոզած հերյուրանքներին ու զրպարտություններին: Գիտնականի՝ պատմության կեղծարարների դեմ ուղղված աշխատություններն այսօր էլ ունեն արդիական հնչեղություն, քանզի դրանք պատասխան են նաև մեր ժողովրդի պատմության մերօրյա կեղծարարներին, հատկապես ամերիկյան որոշ հայագետների կողմից այդ պատմության նենգափոխման վտանգալից փորձերին:

Գիտնականի աշխատություններում լուսաբանված բազմազան հարցերը բովանդակային առումով և ծավալային ընդգրկումով շատ տարողունակ են, ուստի դրանց սպառիչ բնութագրությունը և արժևորումը կտա ժամանակը:

Վերջերս նա հրաժեշտ տվեց կյանքին՝ թողնելով լուսավոր մի հուշ և բարի անուն:

Մեզ հետ չէ վաստակաշատ գիտնականն ու գիտության տաղանդավոր կազմակերպիչը, հասարակական ու քաղաքական նշանավոր գործիչը, բայց մեր գիտության զարգացման գործում ունեցած անուրանալի վաստակով ու թողած գիտական պատկառելի ժառանգությամբ նա արժանի տեղ է գրավում հայրենիքի երախտավոր գավակների շարքում:

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍՆԵՐ՝

ՀՐԱԶԻԿ ՄԻՄՈՆՅԱՆ,
ՎԱՐԴԳԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

КРАТКИЙ ОЧЕРК ЖИЗНИ, НАУЧНОЙ, НАУЧНО-ОРГАНИЗАЦИОННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Галуст Анушаванович Галоян родился в 1927 г. в селе Покр Парни Артикского района Армении. Юноша отлично учился в школе и выделялся примерным поведением. С первых же дней Отечественной войны его отец, врач Анушаван Галоян, добровольно ушел на фронт, лечил и возвращал в строй сотни раненых.

На разных фронтах сражались два сына Анушавана — Мусаел и Александр. Дома с матерью оставались несовершеннолетние Галуст и Армен. Майрик Аннман была олицетворением образа армянской женщины, которая, гордясь своей семьей, вместе с тем в тревоге ожидала почтальона с весточкой от мужа и сыновей. Анушаван Галоян погиб в 1945 году. По решению правительства Советской Армении село Покр Парни было переименовано и названо в честь Анушавана Галояна — «Анушаван».

1945 году, окончив среднюю школу с золотой медалью, Г. Галоян поступает в Ереванский государственный университет на вновь открывшийся факультет международных отношений. Это были трудные, но полные энтузиазма годы, когда победивший народ с верой строил свое будущее. Воодушевление царило везде, в том числе и в области науки.

Исключительно трудолюбивый и вдумчивый

молодой человек выделялся своими успехами. Перед его поколением открывались широкие возможности проявить себя... В послевоенные годы Ереванский государственный университет был настоящим оплотом научной мысли. Блестящий преподавательский состав, который имела армянская аудитория, сделал бы честь любому европейскому учебному заведению. На факультетском и университетском уровне обсуждались сложные научные вопросы. Г. Галоян был одним из самых активных деятелей в общественно-политической жизни университета и пользовался большим авторитетом среди студенчества, будучи секретарем Комитета комсомола республики.

Прогрессивная молодежь была объединена идеей применять свои знания для экономического и духовного развития республики. Г. Галоян был всегда в первых рядах этой молодежи, являясь одним из руководителей и организаторов молодежного движения. В 1950 г. он избирается первым секретарем Кировского райкома комсомола. В этот период он проводит активную работу среди студенчества и интеллигенции. Пленум ЦК комсомола избирает Галояна секретарем ЦК комсомола.

Несмотря на ответственную общественную работу, которая открывала широкую перспективу для продвижения, Г. Галоян был ориентирован на научную деятельность. В 1952 г. он поступает в Академию общественных наук при ЦК КПСС, где в 1955 г. защищает кандидатскую диссертацию.

Начался его путь в большую науку.

Вернувшись в Ереван, Г. Галоян поступает на работу в Армянский филиал Института марксизма-ленинизма старшим научным сотрудником, а в 1958-1963 гг. назначается заведующим отделом и заместителем директора по научной части. Одновременно он преподает в Ереванском государственном университете, Армянском педагогическом институте им. Х. Абовяна и в других вузах.

В 1963 г. Г. Галоян был назначен директором Института истории Академии наук АрмССР. В том же году Г. Галоян защищает в Москве докторскую диссертацию, а через год получает звание профессора, проработав в этой должности до 1979 г. За это время он подготовил многочисленные ценные публикации и одновременно проявил блестящие способности научного организатора. В эти годы в Институте истории работали такие выдающиеся историки, как Ашот Иоаннисян, Сурен Еремян, Мкртыч Нерсисян, Геворк Гарибджанян, Арамаис Мнацаканян, Цатур Агаян, Хикар Барсемян и др. Молодой директор с уважением относился к старшим коллегам, которые своими ценными работами продолжали обогащать армянскую науку. Директор был самозабвенно предан работе, требователен в первую очередь к самому себе.

Крупным достижением института явился 8-томник "Истории армянского народа". Это был коллективный труд, сложную и трудоемкую работу по соз-

данию которого возглавил Г. А. Галоян, приложив свои разносторонние знания, научно-организаторский талант, настойчивость и исключительное трудолюбие. Восьмитомник, несомненно, явился ценным вкладом в духовную и культурную сокровищницу нашего народа. По охвату и глубине это издание не имело аналогов и вызвало большой интерес в научных кругах и среди широкой массы читателей.

За научную и научно-организаторскую плодотворную работу Г. А. Галоян был избран членом-корреспондентом (1971 г.), а в 1982 г. — действительным членом Академии наук Армении.

После почти 16-летнего пребывания в должности директора Г. Галоян работает академиком-секретарем (1979-1982) и вице-президентом (1986-1988) и (1990-1994). С 1994 года и до конца жизни был советником Президента НАН РА. С 1979 по 2003гг. был членом Президиума НАН РА.

Г. Галоян не замыкался в границах “чистой” науки, не был ограниченным кабинетным работником. Он играл активную роль в общественной и гражданской жизни республики, был членом Комитета по присуждению Ленинских и Государственных премий при Совете Министров СССР, членом комиссии по присуждению Государственной премии по науке и технике при Совете Министров АрмССР, заместителем председателя этой комиссии. Г. Галоян также был председателем республиканского Комитета защиты мира. В 1989 г. он избран де-

путатом Верховного Совета СССР. В 1988-1990гг. — был секретарем ЦК КП Армении, по идеологии.

Он был награжден орденом Трудового Красного Знамени, грамотами Президиума Верховного Совета АрмССР, медалью им. Вавилова и др.

Научное наследие крупного историка Г. Галояна по новой и новейшей истории Армении и Закавказья освещает коммунистическое и рабочее движение, установление Советской власти в Армении, роль России в истории Армении, Восточной Армении, судьбоносные события после Октябрьской революции, отношение великих западных держав. В своих работах Г. Галоян уделил большое внимание фальсификации истории армянского народа западными исследователями.

В книге “Рабочее движение и национальный вопрос в Закавказье. 1900-1922” и в других публикациях Г. А. Галоян показал закономерности развития коммунистического и рабочего движения в Армении, роль большевистских организаций в борьбе против царизма. Он был первым, кто преодолел сопротивление некоторых историков и политических деятелей и объективно представил роль созданной в 1918 г. в Западной Армении Коммунистической партии и ее руководства (Гурген Айкуни и др.) и причины объединения в 1920 г. этой западной организации с Коммунистической партией Армении.

В 1957 г. в Москве на русском языке была издана книга Галояна “Борьба за Советскую власть

в Армении”, за которой последовали “Героическое Майское восстание” и другие работы. В этих публикациях, содержащих богатый фактический материал, автор показал, что пережившие геноцид и уцелевшие от физического уничтожения младотурками и кемалистами восточные армяне были спасены благодаря установлению Советской власти в Армении. За короткий исторический срок армянский народ превратил Армению в страну с развитой экономикой, с высоким уровнем образования и культуры.

Г. Галоян был последовательным сторонником армяно-русской дружбы. Этому посвящены книги “Россия и народы Закавказья” (Москва, 1976), “На перепутьях истории” (1982). Автор показал, что российская ориентация Армении была продиктована исторической необходимостью. Освобождение Армении от мусульманского ига также было обусловлено не платонической любовью царского дворца, а тем, что на зигзагах истории совпали интересы двух народов, которые были нужны друг другу. Ученый посвятил много лет изучению создания Первой Республики, Лозаннской конференции, отношению западных держав к Ай Дат. С этой точки зрения и соответствующей политики особый интерес в этом плане представляет монография “Армения и великие державы. 1917-1923 гг.” Автор, владеющий английским, много месяцев провел в архивах Великобритании, библиотеке Конгресса в Вашингтоне и

опубликовал в этой монографии совершенно неизвестные до этого факты и документы. В этой и других работах автор убедительно доказывает, что в армянском вопросе великие державы всегда преследовали исключительно свои цели, используя его в качестве разменной монеты.

Некоторые разделы книги Галуста Галояна “Армения в завоевательных схватках великих держав (с XVI века — 1917 г.)” посвящены истории Армении древнего, средневекового периодов. Такая необходимость была обусловлена глубиной исследуемой проблемы. С одной стороны, генезис армянского народа, с другой — Ай Дат, история армянской государственности, церкви и армянский вопрос, находясь на разных хронологических ступенях, в научно-историческом восприятии Галуста Галояна приведены в целостную логическую и историко-философскую систему.

С целью всесторонней интерпретации выдвинутых им проблем Галуст Галоян счел необходимым исследовать Восточную политику европейских держав с XVI века, межполитические отношения, характеризующиеся стремлением укрепить их позиции в Передней Азии. Ученый наряду с огромным архивным материалом и разноязычной литературой использовал также и статьи, в свое время запрещенные официальной цензурой. Изучив проблемы социального, правового и политического состояния армян в Османской империи и Сефевидской Персии,

а также отношения европейских государств с этими двумя восточными деспотическими государствами, Г. Галоян выявил как их отрицательное влияние на освободительное движение армянского народа, так и их отношение к Армении в вопросе их завоевательных планов. Такой концептуальный подход автору позволяет обоснованно ответить на вопрос, что способствовало подготовке начатого османскими турками и реализованного младотурками геноцида армян.

Галуст Галоян ушел из жизни 21 августа 2003 года, оставив после себя светлый след и доброе имя.

Крупный ученый и талантливый организатор, видный общественный и политический деятель уже не с нами, однако его заслуги в развитии науки и оставленное солидное научное наследие занимают заслуженное место в рядах благородных последователей — сынов Родины.

**Грачик Симонян
Вардгес Микаелян
Академики НАН РА**

SUMMARY

Academician Galust Galoyan's book "Armenia and the Great Powers in 1917-1923", the second book of the monograph ("Armenia and the Great Powers"), which includes the historical period from the 16th century to 1923, was published in 1999. Now the first book ("Armenia in the Aggressive Collisions of the Great Powers (from the 16th century to 1917)") of the monograph is presented to the reader's attention.

For many-sided interpretation of this problem the author studied the Eastern policy of European states carried out by them since the 16th century, their interstate relations, the history of reinforcement of their positions in Western Asia and struggle for keeping the Ottoman empire and Safavid Persia within the limits of their influence. It is seen, that whenever Russia represented a danger for the interests of the European states in Asiatic Turkey, they left aside their conflicting interests and united against Russia, which advocated defense of the western Armenians.

The questions of the social, legal and political state of the Armenians in the Ottoman empire and Safavid Persia, the policy of the governments of those states towards the Armenians are studied in details. The problem of interrelations of these two despotic eastern states with the European states, that had a certain negative influence on the liberation struggle of the Armenian people, is not considered as a question of minor importance.

Without profound research of these questions it would be impossible to elucidate the place of Armenia in realization

of aggressive plans of each European state separately and taken together and answer the question: what conditioned the Ottoman Turks to prepare and realize the Genocide of Armenians by the Young Turks?

Very often there is misinformation in more than thirty thousand books kept in the libraries of different countries. The most part of their authors are foreigners. As early as the end of the 18th century the famous historian Michael Tchamtchyan noted, that many of them wrote with mistakes and ill-will about the history of the Armenian people¹.

Many facts brought in this monograph elucidate in a new light difficult questions of the most severe periods of the history of the Armenian people and they allow to ascertain why centuries were needed for restoration of independence of Armenia, but only in a little part of the Armenians' Motherland.

Special attention is paid to the course of the political history in order to clear up the role of each of the Great Powers in different historic periods in the fate of the Armenian people. It hasn't been done only for recollection of the historic past...

Inner causes of our people's misfortunes are not forgotten. Besides, not a single people got as a present their independence from others. Independence is achieved by all-national collective liberation struggle, perspective political calculations and flexible diplomacy which is useful for the nation. Our people, for the last five centuries being deprived of

¹ Michael Tchamtchyan. History of Armenia, Venice, 1784, p. 3 (in Armenian).

independence, felt the lack of these components. It is testified by the abundance of facts.

The Turkish historians completely falsify the Armenian Question, and explain the reasons of its origin only by external factors². Moreover, they consider the Armenian Question solved, bringing it into correlation with the fall of the Ottoman empire. The Armenian Question, - wrote a Turkish historian, - is an armed revolt of the Armenians against the Ottoman state. This armed rising started during the second half of the 19th century and disappeared in history parallel to the fall of the Ottoman empire.³ This opinion was related to Stalin's point of view, who asserted with another political stress: "Only the Soviet power could solve... the so-called Armenian problem..."⁴ in his article titled "Long live Soviet Armenia" (December 4, 1920).

To these falsifications of the historic realities must be given answers, because neither the Armenia Question, nor *Hay Dat* [the Armenian Cause], in the whole, have found their solution. The establishment of the Soviet rule in a part of Eastern Armenia didn't absolutely mean that "the Armenian problem" was solved. "The Armenian problem" is *Hay Dat*, a constituent part of which has been the Armenian Question. The latter became a subject of the international discussion in 1878 at the Conference in San Stefano and the Berlin Con-

²"Ottoman Archives, The Armenian Question". Center for Historical Research and Documents, Stambul, 1989, p. 422-423.

³ Enver Ziya Karal, "The Armenian Question", Ankara, 1975, p.5.

⁴ V.Stalin.The Works., vol.4, p. 458-459.

gress, as a question of reforms in Western Armenia. The Armenian Question is considered to be a constituent part of the Eastern Question, which emerged as a consequence of the blowing up national-liberation movements of non-Turkish peoples of the Ottoman empire at the threshold of the 19th century. In its turn, it gave an impetus to the struggle of the European states for division of the heritage of the decaying Ottoman empire.

Hay Dat, as the supreme predestinating objective of the national existence of the Armenian people, historically has an earlier origin. Since the 16th century, when Armenia forcibly was divided between the Ottoman Turkey and Safavid Iran, the struggle for reunion of the divided Motherland and reestablishment of the lost independence became the supreme objective of the Armenian people. It is the content of the concept of *Hay Dat*, which “will disappear in history”, only if it finds its equitable solution. The liberation of Eastern Armenia from the Persian domination (1827) and creation of the Republic of Armenia (May 28, 1918) were the first steps on the way of *Hay Dat*.

